<ՅՈՒՆԻԲԱՆԿ> ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ
ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Zoom հավելվածի միջոցով իրական ժամանակի ռեժիմում
ուրբաթ, 1 դեկտեմբերի 2023թ., 14:05

Մասնակցեցին՝
Բաժնետերեր
12 բաժնետեր նիստի բացման պահին

Բանկի Խորհուրդ
Գագիկ Զաքարյան (նախագահ)
Էդուարդ Զամանյան
Հրահատ Արզումանյան
Վարդան Աթայան
Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտ
Ռուբեն Ինջիկյան

Բանկի Վարչություն
Արարատ Ղուկասյան
Գոհար Գրիգորյան
Գուրգեն Ղուկասյան
Օվսաննա Առաքելյան
Վաղինակ Ստեփանյան
Դավիթ Պետրոսյան
Արթուր Ապերյան
Սերգեյ Քոչարյան

Հրավիրվածներ
Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ

Ժողովի քարտուղար նշանակվեց Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Աննա Բադոյանը:

Աննա Բադոյանը ներկայացրեց, որ 01.12.2023թ. <Յունիբանկ> ԲԲԸ Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի քվեարկությունն իրականացվել է քվեաթերթիկների միջոցով: Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմված է 03.11.2023թ. դրությամբ:
Ժողովի գումարման մասին հայտարարությունը պատշաճ կերպով տեղադրվել է Բանկի պաշտոնական կայքէջում, հրապարակվել է <Ժողովուրդ> օրաթերթում, ծանուցումները քվեարթերթիկների հետ միասին ուղարկվել են բաժնետերերին փոստի միջոցով 14.11.2023թ-ին:

Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ լրացրած քվեաթերթիկների ընդունումն ավարտվել է 01.12.2023թ-ին՝ մինչև ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահը: Հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը կազմվել է 01.12.2023թ-ին:

Աննա Բադոյանը ներկայացրեց, որ Բանկի քվեարկող տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի գումարային ձայների քանակը կազմել է 181.254.472 հատ, որից քվեարկությանը մասնակցել է ձայնի իրավունք ունեցող 168.149.327 բաժնետոմս, կամ տոկոսային հարաբերությամբ 92.77%-ը: Քվեարկությանը մասնակցած քվեաթերթիկներից անվավեր ճանաչված առկա չեն: Քվորումն ապահովված է:

Բացելով նիստը և ողջունելով մասնակիցներին՝ **Ժողովի նախագահ Գագիկ Զաքարյանը** ներկայացրեց, որ օրակարգում ընդգրկված են Բանկի խորհրդի կազմում փոփոխություններ կատարելու և խորհրդի ձևավորման քաղաքականությունը հաստատելու հարցերը:

Գագիկ Զաքարյանը հայտնեց, որ Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանը հարգելի պատճառով չի կարող մասնակցել նիստին, և խոսքը փոխանցեց Վարչության նախագահի տեղակալ Օվսաննա Առաքելյանին՝ օրակարգի հարցերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնելու համար:

Հարց 1. <Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի անդամ Էդուարդ Զամանյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին:

Օվսաննա Առաքելյանը ողջունեց մասնակիցներին և նշեց, որ ինչպես նախապես տեղեկացվել է, Խորհրդի անդամ Էդուարդ Զամանյանը դիմում է ներկայացրել իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ: Էդուարդ Զամանյանը Խորհրդի անդամի լիազորությունները ստանձնել է 03.05.2006թ. Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ: Բանկի Խորհրդի անունից շնորհակալություն հայտնեց Էդուարդ Զամանյանին երկար տարիների համատեղ աշխատանքի և Յունիբանկի զարգացման գործում ներդրում ունենալու համար:

Աննա Բադոյանը ներկայացրեց քվեարկությանը մասնակցած բաժնետերերի ձայները, որոնք ըստ օրակարգի 1-ին հարցի, բաշխվել են հետևյալ կերպ՝

կողմ՝ 168.149.327 ձայն, կամ մասնակիցների ձայների 100%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 0 ձայն
անվավեր՝ 0 ձայն

Քվեարկության արդյունքներով, Ժողովը <u>որոշում ընդունեց</u> վաղաժամկետ դադարեցնել <Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի անդամ Էդուարդ Զամանյանի լիազորություններն՝ իր դիմումի համաձայն:

Հարց 2.Կարինե Մինասյանին <Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի անդամ ընտրելու մասին:

Օվսաննա Առաքելյանը ներկայացրեց, որ Խորհրդի որոշմամբ առաջարկվել է Խորհրդի անդամի պաշտոնում առաջադրել Կարինե Մինասյանի թեկնածությունը՝ հաշվի առնելով նրա երկարամյա միջազգային փորձը թվային տրանսֆորմացիայի, ֆինանսների և էկոնոմիկայի, բիզնես գործընթացների կառավարման ոլորտում: Թեկնածուի կենսագրական տվյալները տրամադրվել են Բանկի բաժնետերերին Ժողովի գումարման ծանուցման հետ միասին:

Ժողովի քարտուղարը ներկայացրեց քվեարկությանը մասնակցած բաժնետերերի ձայները, որոնք ըստ օրակարգի 2-րդ հարցի, բաշխվել են հետևյալ կերպ՝

կողմ՝ 168.149.327 ձայն, կամ մասնակիցների ձայների 100%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 0 ձայն
անվավեր՝ 0 ձայն

Քվեարկության արդյունքներով, Ժողովը որոշում ընդունեց <Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի կազմում ընդգրկել Կարինե Մինասյանին՝ մինչև 2025թ-ին կայանալիք 2024թ. բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի գումարումը պաշտոնավարման ժամկետով:

Հարց 3. «Յունիբանկ» ԲԲԸ խորհրդի ձևավորման քաղաքականություն» նոր ներքին իրավական ակտը հաստատելու մասին:

Օվսաննա Առաքելյանը ներկայացրեց, որ մշակվել և Խորհրդի նախնական հավանությանն է արժանացել «Խորհրդի ձևավորման քաղաքականություն» նոր ներքին իրավական ակտը, որը սահմանում է Խորհրդի ձևավորման ընդհանուր սկզբունքները և մոտեցումները, Խորհրդի անդամի թեկնածուի ընտրության և Խորհրդի գործունեության գնահատման կարգը: Փաստաթղթում հաշվի են առնվել KPMG աուդիտորական ընկերության առաջարկությունները:

Աննա Բադոյանը ներկայացրեց քվեարկությանը մասնակցած բաժնետերերի ձայները, որոնք ըստ օրակարգի 3-րդ հարցի, բաշխվել են հետևյալ կերպ՝

կողմ՝ 167.957.327 ձայն, կամ մասնակիցների ձայների 99.89%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 192.000 ձայն, կամ մասնակիցների ձայների 0.11%
անվավեր՝ 0 ձայն

Քվեարկության արդյունքներով, Ժողովը հաստատեց ««Յունիբանկ» ԲԲԸ Խորհրդի ձևավորման քաղաքականություն» նոր ներքին իրավական ակտը:

Աննա Բադոյանը հայտարարեց, որ Ժողովի օրակարգի հարցերը քննարկված են, որոշումներն ընդունված են, դիմեց ներկաներին հարցեր տալու առաջարկով: Լսարանի կողմից հարցեր չներկայացվեցին:

Բանկի Խորհրդի անունից **Գագիկ Զաքարյանը** շնորհակալություն հայտնեց Էդուարդ Զամանյանին 17 տարվա համատեղ աշխատանքի և Յունիբանկի զարգացման գործում նշանակալի ներդրում ունենալու համար: Շնորհավորեց Կարինե Մինասյանին Խորհրդի անդամ ընտրվելու կապակցությամբ և նշեց, որ Կարինե Մինասյանը Խորհրդի առաջին կին անդամն է, ով կհամալրի Յունիբանկի Խորհրդի անկախ անդամների շարքը, համոզմունք հայտնեց, որ նրա հարուստ կենսափորձն ու խորը գիտելիքները կնպաստեն ինչպես մինորիտար բաժնետերերի շահերի առավել պաշտպանությանը, այնպես էլ Յունիբանկի հետագա արդյունավետ զարգացմանը:

Էդուարդ Զամանյանը շնորհակալություն հայտնեց Յունիբանկի ողջ թիմին արդյունավետ համագործակցության համար և պատրաստակամություն հայտնեց շարունակել աջակցել Բանկի ղեկավարությանը հետագա ծրագրերի իրականացման և նոր բարձունքների հասնելու գործում:

Ժողովի նահագահ Գագիկ Զաքարյանը շնորհակալություն հայտնեց միջոցառման մասնակիցներին և ավարտեց Բաժնետերերի ժողովը ժամը 14:25.

Գագիկ Զաքարյան **Նախագահ**	**Աննա Բադոյան** **Քարտուղար**

ք. Երևան, 04 դեկտեմբերի 2023թ.